

նակներին ստիպում է գաղտնի պահել տեղեկատվության մշակման մեթոդիկան: Այսպես, «Էքսպերտ» ամսագրի վարկանիշերը ցույց չեն տալիս՝ թե կոնկրետ ի՞նչ տվյալներ են օգտագործվել և ինչպե՞ս է ստացվել համընդհանուր ցուցանիշը, Ի. Տիխոմիրովայի գրքում օգտագործված են մոտ 100 ցուցանիշներ, իսկ թե ինչպե՞ս են դրանք դառնում մեկ ընդհանրական ցուցանիշ՝ մնում է անհայտ, իսկ ատացված արդյունքի (վարկանիշի) լիարժեք բացատրության բացակայությունը և աշխատանքի «ուշ թափանցիկությունը» դժվարացնում է դրանց օբյեկտիվ գնահատումը: Եվ սա այն դեպքում, երբ այսպիսի վարկանիշերը ոչ միշտ կարող են պատասխան տալ այն հարցերին, որոնք հետաքրքրում են ներդրողներին, և որոնց էլ, կարծես թե, ուղղված են այսպիսի հետազոտությունները:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ «տնտեսական ներուժ» հասկացությունը ժամանակի ընթացքում որոշակի էվոլյուցիա է ապրել: Սկզբնական շրջանում ի հայտ գալով որպես ռեսուրսների համախմբի և (կամ) դրանց «վերամշակման» հզորության հոմանիշ՝ հետագայում այն լրացվեց ռեսուրսների օգտագործման գործընթացը պայմանավորող կազմակերպչական և սոցիալական գործոնների բնութագրմամբ: Եթե սկզբնական շրջանում ներուժի զարգացման խնդիրը դիտարկվում էր որպես ռեսուրսների (հիմնական ֆոնդերի, հումքի, աշխատուժի և այլն) գլխավորապես քանակական ավելացում, իսկ ինտեսիֆիկացման տակ հասկացվում էր նոր տեխնոլոգիաների ներդրում և աշխատուժի որակի բարձրացում, ապա ավելի ուշ ինտեսիֆիկացիայի գործոններն ինքնին սկսեցին դիտարկվել որպես սոցիալական պայմանների (աշխատանքի արդյունքներում շահագրգռվածության մեծացման, աշխատանքային կարգապահության մակարդակի բարձրացման, նոր տեխնոլոգիաների ներդրման ակտիվացման և այլնի), կառավարման բարելավման և դրա նոր ձևերի որոնման արդյունք, իսկ ռեսուրսների զուտ քանակական աճը մղվեց երկրորդ պլան:

Շուկայական վերափոխումները և տնտեսական գործունեության ազատականացումը հանգեցրին տնտեսական ներուժի տնտեսագիտական բովանդակության նոր ընկալման և մեկնաբանման՝ որպես մրցակցության պայմաններում սոցիալ-տնտեսական համակարգի հարմարվողականության ու զարգացման ունակության: Այսպիսով, ներուժը հանդես է գալիս որպես համալիր բնութագրիչ, որը հաշվի է առնում ոչ այնքան օբյեկտի (ձեռնարկության, տարածաշրջանի, երկրի) ներքին ռեսուրսները, այնպիսիք, ինչպիսիք են՝ նյութական ակտիվները, կադրերը, տեխնոլոգիաները և այլն, որքան շուկայական և վարչական ներքին ու արտաքին միջավայրերը, որոնք նախկինում գործնականորեն չէին ներառվում «ներուժ» հասկացության բացատրության մեջ:

Այս պայմաններում տարածաշրջանի ՄՏՆ-ի գնահատումը պետք է կրի համալիր, համակարգային բնույթ և հաշվի առնի ինչպես տարածաշրջանի ներքին ռեսուրսները, այնպես էլ դրա վրա ազդող արտաքին գործոնները: Գնահատման համար կարող են օգտագործվել տարբեր մեթոդներ՝ էկոնոմետրիկական մոդելավորումը (օգտագործելով արտադրական ֆունկցիաները), մարքեթինգային մոտեցումը՝ օգտագործելով տարածաշրջանում արտադրվող արտադրանքի կյանքի ցիկլի հասկացությունը և դրա իրացումից ստացվող եկամուտները կամ մրցակցային առավելությունների հետազոտման վրա հիմնված մեթոդը, ինստիտուցիոնալ վերլուծությունները, որոնք բնութագրում են տնտեսական ազենտների գործունեության և համագործակցության արդյունավետությունը և այլն: Ընդ որում, շատ կարևոր դեր է խաղում տարածաշրջանի ՄՏՆ-ի ուսումնասիրության բուն (հիմնական) նպատակը, որը կանխորոշում է ինչպես ներուժի գնահատման ընդհանրական ցուցանիշի (բնակչության բարեկեցության մակարդակի, արտադրանքի թողարկման, վարկունակության և այլն) ընտրությունը, այնպես էլ ուսումնասիրության մեթոդիկան:

## ՎԻԼԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, տ.գ.թ.

## ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄԶԵՐԸ

Ամբողջ հանրային կառավարման համակարգում ռազմավարության առկայությունը շատ կարևոր է: Յուրաքանչյուր երկիր փորձում է իր համար ձևակերպել այն ռազմավարական քայլերի ամբողջությունը, որոնք հետագայում կբարձրացնեն տվյալ երկրի դիրքերը ողջ համաշխարհային տնտեսության մեջ, ինչպես նաև կապահովեն առավելագույն բարեկեցություն սեփական ժողովրդի համար: Պետության տնտեսական ռազմավարությունը, որի հիմքում ընկած են առաջնահերթությունները և պետության կողմից տնտեսության մեջ միջամտության լծակները, իրականացվում են տնտեսական քաղաքականության առանձին ձևերի միջոցով: Տնտեսական քաղաքականությունը հստակեցնում է այն սկզբունքների ամբողջությունը, որով պետությունը միջամտում է երկրի տնտեսական կյանքին<sup>1</sup>:

Պետության տնտեսական քաղաքականության տարատեսակները կամ ուղղություններն են՝ արտաքին տնտեսական, ինստիտուցիոնալ, ներդրումային, ֆինանսական, դրամավարկային, տարածաշրջանային, գոտիական քաղաքականություններ և այլն:

<sup>1</sup> Албегов И.М., Емцов Р.Г., Холопов А.В., Государственная экономическая политика: Опыт перехода к рынку/Под общей редакцией д.э.н., профессора Сидоровича А.В. —М.: Издательство “Дело и сервис” 1998. с 37.

Այս ուղղություններին կարող ենք ավելացնել նաև ճյուղային քաղաքականությունը, մասնավորեցման քաղաքականությունը, սակայն բոլոր դեպքերում երկրի տնտեսության համրային կառավարման համակարգում քաղաքականության մշակումը և ռազմավարական ծրագրերի իրագործումն ուղղված են մեկ միասնական համակարգի ձևավորմանը, ինչպես նաև կոնկրետ առաջացող հիմնախնդիրներին ճիշտ ժամանակին արտաքին և ներքին միջավայրերի իրավիճակային վերլուծության և գնահատման շնորհիվ լուծումներ գտնելուն:

Ռազմավարական կառավարման անհրաժեշտությունը համրային կառավարման համակարգում ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ առաջանում է նոր մոտեցումներ ցուցաբերելու անհրաժեշտություն, այնտեղ, որտեղ ավանդական մոտեցումներն իրենց սպառել են, իր դիրքերն է ամրապնդում ռազմավարական կառավարումը՝ բազմակողմանիորեն ուսումնասիրելով ներքին և արտաքին միջավայրերը, բացահայտելով այլընտրանքային լուծման տարբերակները, գնահատելով դրանցից յուրաքանչյուրի արդյունավետությունը և կիրառման հնարավորությունները:

Պետք է նշել, որ ռազմավարական կառավարման քանակական գնահատման մեթոդները մուտք են գործում պետական կառավարման ոլորտ՝ գնահատելու համար պետական կառավարման մարմինների գործունեության արդյունավետությունը, արդյունքայնությունը և խնայողականությունը: Ավանդական մոտեցման պարագայում հիմնականում կենտրոնացվում են պետական միջոցների ծախսման վրա, տեսադաշտից դուրս բողմելով միջոցների ծախսման շնորհիվ ստացված արդյունքները: Ռազմավարական կառավարման ոչ բոլոր մեթոդներն են միևնույն արդյունավետությամբ կիրառելի պետական կառավարման հատվածում, այն պարզ պատճառով, որ պետական կառավարումն ունի իր առանձնահատկությունները. տարբերվում են կառավարման մասշտաբները, բազմազան են մպատակները, ընդլայնվում են պատասխանատվության շրջանակները և այլն:

Տնտեսության համրային կառավարման ռազմավարության հիմքը կազմում են երկու կարևորագույն սկզբունքներ<sup>1</sup>.

1. արդյունավետ արտադրության սկզբունքը,
2. եկամուտների արդյունավետ բաշխման սկզբունքը:

Այս երկու սկզբունքներին տնտեսագիտական գրականության մեջ ավելացվում է նաև երրորդ կայունության սկզբունքը, որի տակ հասկացվում են սղանի ցածր տեմպեր, գործազրկության ցածր մակարդակ՝ բնականին մոտ, և միջին տնտեսական աճ: Այս սկզբունքների հիման վրա էլ պետությունը կառուցում է իր ռազմավարությունը: Նշված սկզբունքների համատեղ կիրառությունը նշանակում է սոցիալապես արդյունավետ զարգացման ռազմավարության ընտրություն: Այս սկզբունքներից որևէ մեկի խախտումը նշանակում է անցում պետական կորստի տարածք, աշխրհ՝ անձնական շահերով շարժվող մի խումբ անձինք, որոնց բարեկեցությունը բարձրանում է մնացածների բարեկեցության և կյանքի որակի անկման հաշվին:

Այսպիսի քաղաքականության արդյունքում կարող են խաթարվել պետության տնտեսական անվտանգության հիմքերը:

Պետության ռազմավարության դասակարգման չափանիշները պայմանավորված են պետության տնտեսական միջամտության հետ, ըստ այդմ բաժանվում են երեք տիպի՝ լիբերալ, կարգավորիչ, մոնիթինգային ռազմավարություններ<sup>2</sup>, որոնք միմյանցից տարբերվում են ապրանքների և կապիտալի շրջանառության կարգավորմամբ:

Համրային կառավարման համակարգում շատ մեծ կարևորություն ունի պետության առաքելությունների շրջանակների ճիշտ բնորոշումը, որոնք կարող են ընդգրկել.

1. ռազմավարության և առաջնահերթությունների մշակումն ու պետական քաղաքականության ընտրությունը,
2. քաղաքականության հիմնական մասնակիցների հետ համաձայնությունը և գործողությունների կոորդինացումը,
3. հասարակական կազմակերպությունների և քաղաքացիներին պետական քաղաքականության մշակման և իրականացման մպատակային ծրագրերի մեջ ընդգրկելը,
4. սոցիալ-տնտեսական գործընթացների կազմակերպման, մշակման, մոնիթորինգի և գնահատման գործընթացները կարգավորելը:

Առաքելության տարրերի իրականացումը շատ մեծ կարևորություն ունի, և եթե այս հարցին մոտենանք զլորալ տեսանկյունից, ապա կտեսնենք, որ բոլոր դեպքերում երկրի առաքելության հիմքում դրված է կայուն զարգացման հայեցակարգը, որն ընդունվել է 1996թ-ին Ռիո-Դե-ժանեյրոյում (Բրազիլիա):

Յուրաքանչյուր երկրի ռազմավարություն, բացի ճյուղային առանձին ոլորտների ռազմավարությունից, պետք է ունենա զարգացման ռազմավարություն հետևյալ երեք մակարդակներում.


- համապետական զարգացման ռազմավարություն,
- տարածքային (մարզեր) զարգացման ռազմավարություն,
- համայնքային (ՏԻՄ-եր) զարգացման ռազմավարություն:

Համապետական զարգացման ռազմավարությունն ունի իր առանձին քաղաքատարրերը: Համրային կառավարման համակարգի արդյունավետ գործունեության հիմքերից մեկը հանդիսանում է համապետական ռազմավարության առկայությունը: Մեր երկրում այդպիսի ռազմավարական ծրագրեր արդեն մշակվել են՝ «Աղքատության հաղթահարման ռազմավարություն», «Միջնաժամկետ ծախսային ծրագրեր», «Համրային հատվածի արդիականացման ծրագիր» և այլն, սակայն անհրաժեշտ է այդ ծրագրերը համակարգել և միասնական ամբողջ երկրի համար ռազմավարական ծրագիր մշակելով, դրանք ներառել տվյալ ծրագրի մեջ:

<sup>1</sup> Е.Н. Ведута, Государственные экономические стратегии, Российская Экономическая Академия имени Г.В. Плеханова, Издательство "Деловая книга". -М.: 1998. Екатеринбург, 1998. с. 14


<sup>2</sup> Гапоненко А.Л., Панкрухин А.П., Стратегическое управление: Учебник. -М.: Омега-Л, 2004. с 55.

Ողջ երկրի ռազմավարական կառավարման ծրագրի գործունեության բաղադրատարրերը ներկայացրել ենք գծանկարի տեսքով (տես գծանկար 1):



**Գծանկար 1. Ռազմավարական կառավարման համակարգի գործունեության բաղադրատարրերը**

Յուրաքանչյուր երկիր, ռազմավարություն մշակելիս պետք է ունենա հստակ գործողությունների ակտիվ, այսինքն՝ միմյանց հաջորդող և փոխկապակցված քայլերի ամբողջություն: Ռազմավարություն մշակելիս անհրաժեշտ է համակարգել առանձին ռազմավարությունները, ապա դրանք միասնաբար վերլուծել և առանձնացնել առաջնություններն ու գերակայությունները: Դրանից հետո պետք է հստակեցվեն նպատակները, չափանիշների համակարգը, ռազմավարական առանձին ծրագրերը, իրականացնող մարմինները և այլն (տես գծանկար 2):



**Գծանկար 2. Ռազմավարական սղանափորման ակտիվիտի**


Պետության կողմից տնտեսության հանրային հատվածի կառավարումն ուղղված է հիմնականում հանրային որակյալ ծառայություններ մատուցելուն և հանրային ծառայությունների որակի բարձրացմանը: Հան-

<sup>1</sup> Круглов Н. Ю, Круглов М.И., Стратегический менеджмент, Учебник для вузов.- М.: Издательство РДИ, 2003. с. 382

րային կառավարման ռազմավարության մշակումն ու իրականացումն ուղղված է անմիջապես դրան: Ռազմավարության բաղադրիչ տարրերը կազմող երեք հիմնական մպատակներն են.

1. հանրային կառավարման բարեփոխումները,
2. հանրային և մասնավոր հատվածների միջև համագործակցության ձևավորումը,
3. հանրային (պետական) ծախսերի կառավարումը:

Հանրային բարեփոխումների իրականացման ռազմավարական պարբերաշրջանն ընդգրկում է չորս տարի ժամանակահատված.




### Գծանկար 3. Համակարգային բարեփոխումների տիպիկ քաղաքականության պարբերաշրջան

Հանրային կառավարման բարեփոխումներն անհրաժեշտ է իրականացնել ռազմավարական կառավարման տարրերի օգտագործման միջոցով, քանի որ, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը և հատկապես բազմաթիվ անցումային երկրների անցած ուղին, հանրային կառավարման բարեփոխումները, տնտեսական մի շարք հիմնախնդիրների լուծումները նրանք իրականացրել և գտել են ռազմավարական կառավարման շնորհիվ: Ռազմավարական կառավարումն ամբողջ պետության մակարդակով թույլ է տալիս համակարգել և միավորել միկրոմակարդակի առանձին հիմնախնդիրները, դրանք տեղափոխել մակրոմակարդակ և դրանց լուծումները գտնել ամբողջ պետության մասշտաբով: Այստեղ ամենամեծ դերն ունեն հանրային հատվածի այլընտրանքային ռազմավարությունների<sup>1</sup> ընտրության և դրանց իրականացման հարցերը, որովհետև զարգացման այս բարդ փուլում շատ ու շատ հարցերի լուծման տարբերակների ընտրությունը երկընտրանքի առաջ է կանգնեցնում հանրային քաղաքականություն մշակողներին և իրականացնողներին:

Ռազմավարական կառավարման հաջորդ մակարդակն առնչվում է տարածքային զարգացման հետ:

Տարածքային կառավարման միավորների սոցիալ-տնտեսական զարգացման միասնական համակարգի ձևավորումը հանրային կառավարման համակարգում ունի առաջնային դեր:

Այստեղ կան մի շարք հիմնահարցեր, որոնք պահանջում են խոր վերլուծություն և հատկապես առնչվում են սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության, կանխատեսման և սոցիալ-տնտեսական զարգացման այլաձևավորման, մպատակային ծրագրերի իրականացման, ներդրումների ներգրավման, մարզի ենթակառուցվածքների ձևավորման և կատարելագործման հետ և այլն: Պետք է նշել, որ տարածքային կառավարման միավորների կայուն սոցիալ-տնտեսական զարգացումը կապված է մի շարք հետևողականորեն լուծում պահանջող հարցերի, ինչպես նաև միմյանց հետ փոխառնչվող և փոխլրացնող տարածքային կառավարման համակարգի տարրերի հետ:



### Գծանկար 4. Տարածքային կառավարման միավորների սոցիալ-տնտեսական զարգացման մպատակների և խնդիրների համակարգ

Տարածքային կառավարման սոցիալ-տնտեսական զարգացման մպատակների և խնդիրների համակարգն իր մեջ ընդգրկում է իրավիճակային վերլուծությունը, ներքին և արտաքին միջավայրի տարրերի ուսում-

<sup>1</sup> A Public Sector Alternative Strategy, The PSI vision, April 1995

նասիրությունը, նորմատիվ-իրավական բազայի ուսումնասիրությունը և դրա կատարելագործումը: Վերոնշյալ տարրերի միավորումը մեկ միասնական համակարգում հնարավորություն է տալիս կանխատեսել և հաշվի առնել այն հիմնախնդիրները, որոնք կարող են ի հայտ գալ և որոնց կարող են բխվել մուլտիպլա միավորները զարգացման ծրագրերի մշակման և իրականացման ժամանակ:

Յուրաքանչյուր մարզ պետք է ունենա իր մշակված սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, որն իր մեջ պետք է ընդգրկի մարզի և համայնքների զարգացման ծրագրերը, ինչպես նաև այն մախագծերը և ծրագրերը, որոնք իրականացվում են համայնքների համատեղ ուժերով՝ միջհամայնքային միավորների միջոցով: Ամբողջ երկրի տարածքային քաղաքականությունը պետք է պայմանավորված լինի մարզերի զարգացման ծրագրերով, որոնք պետք է ամբողջացվեն տարածքային կառավարման և քաղաքականության իրականացման հայեցակարգում: Այդ իսկ պատճառով, ՀՀ տարածքային կառավարման մախարարությունում անհրաժեշտ է ստեղծել *միջմարզային կոորդինացիոն վարչություն*, որը պետք է կոորդինացի մարզերի համամասնական զարգացումը, ինչպես նաև զբաղվի մարզերի ռազմավարական պլանավորման հիմնախնդիրներով: Իհարկե, մեկ վարչության գործառնությունների շրջանակներում դա բավականին դժվար կլինի իրագործել, սակայն համագործակցելով միջազգայն կազմակերպությունների և գործադիր իշխանության մյուս մարմինների, հատկապես Ֆինանսների և Էկոնոմիկայի, Առևտրի և տնտեսական զարգացման մախարարությունների հետ, այդ հարցերը ավելի օպտիմալ ձևով կստանան իրենց լուծումները:

Տարածաշրջանի տնտեսական զարգացման ռազմավարական պլանավորման պարբերաշրջանը (ցիկլ) իր մեջ ընդգրկում է հետևյալ փուլերը<sup>1</sup>.

1. զարգացման նպատակների բացահայտում,
2. տարածաշրջանի զարգացման ներքին և արտաքին միջավայրերի վերլուծություն,
3. ուժեղ և թույլ կողմերի, ինչպես նաև սպառնալիքների բացահայտում,
4. գոյություն ունեցող և նոր հնարավորությունների բացահայտում,
5. զարգացման հայեցակարգի մշակում,
6. կոնկրետ գործողությունների իրականացման ռազմավարական ծրագրի մշակում,
7. արդյունավետության և արդյունքայնության վերլուծություն, նպատակներին հասնելու մեթոդների համախմբում:

Ռազմավարական կառավարման գործընթացում յուրաքանչյուր երկրի, մարզի, քաղաքի և համայնքի համար զարգացման ռազմավարություն մշակելիս այս փուլերի տրամաբանությունը պահպանելը ցանկալի է, որովհետև այդ փուլերից յուրաքանչյուրն ունի իր տրամաբանությունը ռազմավարության մշակման համար: Իհարկե, այստեղ առաջանում է հետևյալ հարցը, չէ՞ որ երկրները, մարզերը իրարից տարբերվում են տնտեսական ակտիվությամբ, աշխարհագրական դիրքով և բնական ռեսուրսներով, տնտեսական պայմաններով, տնտեսական սուբյեկտների գործունեության արդյունավետությամբ, բնակչության կենսապայմանների սոցիալական կազմակերպվածությամբ, քաղաքական իրավիճակով և պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետությամբ: Այս նշված տարրերը մի շարք ռազմավարական մատրիցաների (SWOT, STEP, PEST, McKinsey & General Electics) միջոցով ուսումնասիրվում են, և դրանց արդյունքներից սինթեզվում է ռազմավարության համապատասխան տարբերակը: Նշված մատրիցաների միջոցով ուսումնասիրվում են երկրի կամ մարզի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները, տնտեսական, քաղաքական, սոցիալական իրավիճակը, տեխնոլոգիաների զարգացվածությունը, քաղաքական տեխնոլոգիաների կիրառությունը և այլն:

Ռազմավարական կառավարման հաջորդ մակարդակը կապված է համայնքների ռազմավարության մշակման հետ: Համայնքներում ռազմավարական կառավարման համակարգի ձևավորման հիմքը կազմում են համայնքի զարգացման ծրագիրը և համայնքի բյուջեն: Այստեղ կան մի շարք սկզբունքներ և կառուցակարգեր, որոնք պահպանվում են համայնքների ռազմավարության մշակման ժամանակ: Համայնքների ռազմավարության մշակումը գրեթե նույնությամբ կրկնում է մեր կողմից արդեն իսկ ուսումնասիրված համապետական և տարածքային զարգացման ռազմավարությունների մշակման տրամաբանությունը: Այստեղ, իհարկե, մարզերը բյուջե չունեն, այդ իսկ պատճառով որոշակի տարբերություններ գոյություն ունի համայնքային և մարզային ռազմավարությունների մշակման միջև, սակայն և՛ փուլային համակարգը, և՛ առանձին բաղադրատարրերը նույնությամբ կիրառելի են համայնքներում:

Համայնքների ռազմավարական կառավարման գործընթացում *տնտեսական զարգացման խորհուրդների* ձևավորումը կարող է ապահովել բավականին մեծ արդյունավետություն: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական սեփականությունը մեր երկրում մասնավոր սեփականության համեմատությամբ բավականին փոքր տեսակարար կշիռ ունի, և դա թույլ է տալիս մասնավոր հատվածին իր ազդեցությունը թողնել համայնքի և ողջ երկրի տնտեսության զարգացման վրա, այդ իսկ պատճառով տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությունը համայնքներում մասնավոր հատվածի ձեռնարկությունների հետ խիստ անհրաժեշտ և նպատակահարմար է, քանի որ այդ տնտեսական միավորների գործունեության ռազմավարական ծրագրերն իրենց անմիջական անդրադարձն են թողնում համայնքի զարգացման ծրագրի վրա:

Ռազմավարական կառավարման մեթոդաբանական հարցերն ու հիմնախնդիրները բավականին շատ են մեկ հոդվածի շրջանակներում ամփոփ ներկայացնելու համար:

Այնուամենայնիվ, տնտեսության հանրային կառավարման ռազմավարական կառավարման հիմնախնդիրները մեծ կարևորություն են ներկայացնում: Այդ իսկ պատճառով, Հայաստանին անհրաժեշտ է եռամակարդակ ռազմավարական կառավարման ծրագիր, որը բաղկացած կլինի համապետական, տարածքային և

<sup>1</sup> Гапоненко А.Л., Панкрухин А.П., Стратегическое управление: Учебник. –М.: Омега-Л, 2004. с. 369

տեղական ինքնակառավարման ռազմավարություններից: Այդ ռազմավարությունը պետք է մշակվի պետության առաքելության, նպատակների, խնդիրների, ներքին և արտաքին միջավայրերի իրավիճակային վերլուծության, հիմնախնդիրների այլընտրանքային լուծման տարբերակների ճիշտ ընտրության, գնահատման և հետադարձ կապի համակարգի ձևավորման հիման վրա: Միայն այդ պարագայում է հնարավոր ունենալ հստակ մշակված, ինչպես նաև իրագործելի ռազմավարություն՝ հանրային կառավարման մակարդակում:

## ԴԱԿԻԹ ՅԱԽՎԵՐԴՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայտնի է, որ տնտեսական քաղաքականությունը ձևավորելիս սովորաբար հիմնվում են այս կամ այն հայտնի տեսական հայեցակարգի վրա, գտնելով, որ առանց որևէ հանրահայտ տեսության «հովանավորության» անհնար է կառավարել երկրի արդյունավետ տնտեսական աճը: Սակայն կյանքը ցույց է տալիս, որ տնտեսությունը ոչ միշտ է համընկնում իրականության հետ և երբեմն հանգեցնում է անկանխատեսելի հետևանքների:

Փորձենք առավել մանրամասն դիտարկել տնտեսական քաղաքականության և տնտեսագիտական հայտնի տեսությունների միջև կապն ու հեռանկարները:

Առհասարակ, երկրի տնտեսական քաղաքականության մասին խոսելիս, անպայման հարց է առաջանում քննականության և ֆիրմանականության կողմնակից լինելու մասին: Երկու-երեք տասնամյակ առաջ այս տեսակետն, ընդհանուր առմամբ, պիտանի էր: Այսօր այդ պարզամտությունը մի շարք պատճառներով կարող է հանգեցնել կասկածելի հետևանքների. համաշխարհային տնտեսության քանակական և որակական աճը, աշխարհի քաղաքական կառուցվածքում արմատական տեղաշարժերը, տնտեսական գործընթացները կարգավորելու նոր հնարավորությունները և վերջին տարիների մյուս երևույթները ծնեցին արմատական փոփոխություններ տնտեսագիտության և տնտեսական քաղաքականության մեջ: Իսկ ինչպիսի՞ տեսություններ են ընկած ներկայիս զարգացած երկրների տնտեսական քաղաքականության հիմքում:

Պարտադիր չէ, որ խոսքը վերաբերի հատուկ տեսական հիմնադրույթներին, և, բացի այդ, երկրների ղեկավարները բնավ գիտնական-տեսաբաններ չեն: Այնուհանդերձ, գերակշռող մոտեցումների համաձայն՝ ցանկացած շուկայական երկրի տնտեսական գործունեությունը այսպես թե այնպես հարում է տնտեսագիտական մտքի՝ ներկայումս ընդունված տեսական ուղղություններից մեկին, թեև հազիվ թե տեսությունն ամբողջությամբ համընկնի գործնական կյանքին: Օրինակ՝ անցած դարի վերջին քառորդում ԱՄՆ-ի տնտեսության վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացության, որ իրական տնտեսական քաղաքականությունը որևէ պահանջարկվող (կամ, առավել ևս, որևէ մեկին ձեռնտու) տեսության մեջ «տեղավորելը» ոչ միայն օգտակար չէ, այլև կարող է ապակողմնորոշել գիտական հասարակությանն ու ոչ ճիշտ ուղու վրա դնել երկրի ղեկավարությանը և, բացի այդ, իրական տնտեսական քաղաքականության արդյունավետությունն ապահովելու համար այն չի կարող պարփակվել առանձին տեսական սխեմայի շրջանակներում: Նմանօրինակ փորձերի անհեռանկար լինելը ցույց տվեց հետխորհրդային մի շարք երկրների, այդ թվում՝ մեր հանրապետության անցած տարիների փորձը: Վերոգրյալից հետևում է, որ չի կարելի տնտեսական քաղաքականությունը կառուցել միայն մեկ տեսությանը համապատասխան և հակառակը, նպատակահարմար չէ տնտեսական քաղաքականության և գործնական միջոցառումների համակարգի «տեղավորումը» զուտ տեսական սխեմաներում:

Այսպես, որոշակի ժամանակահատվածի համար և կոնկրետ նախագահի իշխանության օրոք ԱՄՆ-ի տնտեսական քաղաքականությունը որոշակի տեսական ուղղության «կապակցելը» խիստ տարածված էր XX դարի 60-80-ական թվականներին և այն բնութագրական էր ոչ միայն հայրենական, իմա՝ խորհրդային հետազոտողներին: Սակայն և՛ ԽՍՀՄ-ում, և՛ հետխորհրդային երկրներում վերլուծությունը մշտապես կենտրոնացվում էր գաղափարախոսական կապերով՝ խոչընդոտելով հետազոտությունների օբյեկտիվությունը:

Ջոն Մեյնարդ Էնլանսի նկատմամբ հանդուրժողական-քննադատական վերաբերմունքը սովորական երևույթ էր խորհրդային ժամանակներում, իսկ 1990թ-ից հետո այդ քննադատությունը վերաճեց ուղղակի անհանդուրժողականության: Հայացքների այս վերափոխումը ոչ վաղ անցյալում գերակշռող դիրք ունեցող տեսության նկատմամբ ինքնին մոտրումների տեղիք է տալիս: Խոսքը չի վերաբերում դատարկ պատվախնդրությանը, շահամոլությանը կամ անիրազեկությանը, որը ստիպում է հայրենական «քարեփոխիչներին» տնտեսության վերակառուցումը տանել մոնետարիզմի ուղիով. այդ գործոններն ակնհայտ են և շուկայական «տապալումներում» նրանց դերը առաջիկա մի քանի տարում բացահայտ կլինի: Առավել կարևոր է գնահատել հայեցակարգային կոնֆլիկտի տեսական կողմը՝ ֆինանսների, գույքի և իշխանության գեղեկ բաժանմամբ երկար ժամանակ պատմեցված, սակայն իր գոյությունն առ այսօր պահպանած: Ձևավորվել է այնպիսի պատկեր, ըստ որի քննական տեսությունը, առաջին հերթին, որոշակի ժամանակահատվածում զուգակցվելով կոնկրետ երկրի տնտեսական քաղաքականության հետ՝ ոչ միայն բավականին խորն ու լայն է, որպեսզի ընդգրկի և բացատրի իրական տնտեսական ռազմավարության հիմնական ուղղություններն ու նրա արդյունքները կամ, ընդհակառակը, որպեսզի տնտեսական ոլորտի բոլոր գործնական միջոցառումները «դասավորվեն» սովյալ տեսական հայեցակարգի շրջանակներում, այլ տրամաբանորեն մտածելով՝ քննականությունը